

### **Օրակարգ**

1. Ուսխորհրդի նախագահի հաշվետվություն:
2. 2023-2024 ուստարում թարգմանության տեսության և պրակտիկայի, ֆրանսիական բանասիրության ամբիոնների կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություն /Ռ. Ղազարյան, Գ. Սարգսյան/:
3. Դասախոսների և ասիստենտների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթի անցկացում:

Ընթացիկ հարցեր:

ԵԼՀ ֆակուլտետի գիտական խորհրդի նիստին 36 անդամներից ներկա էին 25-ը: Դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ուսխորհրդի նախագահի հաշվետվությանը՝ խոսքը փոխանցելով ԵԼՀ ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ Գ. Հարությունյանին:

**ԼՄԵՑԻՆ՝** ԵԼՀ ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ Գ. Հարությունյանի հաշվետվությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ԵԼՀ ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ Գ. Հարությունյանը նշեց, որ ուսանողական խորհուրդը ծավալել է բազմաբովանդակ գործունեություն՝ հիմք ընդունելով ՈւԽ կանոնադրությամբ սահմանված նպատակները:

Նպատակ 1. Նպաստել ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության գործընթացների արդյունավետ իրականացմանը, խթանել իրազեկվածության և իրավագիտակցության մակարդակների բարձրացումը: Առաջին նպատակի իրականացման նպատակով ՈւԽ կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Իրազեկումների շարք հետևյալ թեմաներով՝

1. ֆակուլտետի կառուցվածք, գործունեություն,
2. ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ,
3. բողոքարկում, լուծարքներ,
4. զեղչեր, կրթաթոշակներ, դրանցից օգտվելու հիմքեր:

Ողջ տարվա ընթացքում իրականացվել են հանդիպումներ բոլոր կուրսերի ուսանողների հետ՝ ֆակուլտետում և կուրսերում առկա խնդիրների բացահայտման և կանխարգելման նպատակով:

Նպատակ 2. Նպաստել բուհի կառավարմանը ուսանողների մասնակցության արդյունավետության բարձրացմանը:

2-րդ նպատակի իրականացումը պայմանավորված է եղել՝

1. կառավարման մարմիններում սովորող անդամների թափուր հաստիքների համալրմամբ,
2. սովորող անդամների հետ պարբերական հանդիպումների իրականացմամբ,
3. ուսանողական խնդիրների վերհանմամբ, կառավարման մարմիններում ընդգրկված սովորող անդամների կողմից հնարավոր լուծումների առաջարկներով:

Նպատակ 3. Նպաստել ուսանողական խորհրդի անձնակազմի ներքին կարողությունների զարգացմանը՝ շեշտադրելով հետևողական աշխատանքը նախագահության անդամների, ՈւԽ անդամների և պատվիրակների հետ:

3-րդ նպատակի համար իրականացվել են

1. Ուխտաբեր հաստիքների լրացում,
2. ամենամայա նիստեր ՈւՄ անդամների հետ,
3. հաճախակի հանդիպումներ պատվիրակների հետ:

Նպատակ 4. Նպաստել համալսարանում ոչ ֆորմալ կրթական միջավայրի բարելավմանը՝ խթանելով ուսանողների ակտիվ մասնակցությունը գիտակրթական, մշակութային, սպորտային, ռազմահայրենասիրական ոգու բարձրացմանն ուղղված, մասնագիտական և այլ բնույթի միջոցառումներում ու ծրագրերում:

Իրականացվել են հետևյալ մշակութային, սպորտային և գիտակրթական միջոցառումները՝

- Շախմատի ներֆակուլտետային խաղեր
- Վոլեյբոլի միջֆակուլտետային խաղեր
- Սեդանի թենիսի ներֆակուլտետային առաջնություն
- Այց Ջանգակ գրատուն
- Thanksgiving ամենամայա միջոցառման իրականացում
- Լեզու և մշակույթ. սեմինար
- Հանդիպում Erasmus+ ծրագրի մասնակիցների հետ, փորձի փոխանակում
- Այց թատրոն. «Պատերազմի ցեցը»
- «Գրական մանրութիւններ» ինտելեկտուալ խաղ-մրցույթ
- Գրքի քննարկում. Ֆ. Կաֆկա «Դատավարություն»
- Այց թատրոն. «Ռոմեո և Ջուլիետ»
- Այց կինո. «Մադամ սարգոստայն»
- Այց Ազգային պատկերասրահ
- Այց թատրոն. «Փարիզյան դատավճիռ, ԱՍԱԼԱ»
- «Փափուկ հմտությունների» վերաբերյալ դասընթացների շարք՝
  1. Առաջնորդության հմտություններ,
  2. CV, մոտիվացիոն նամակ,
  3. Ժամանակի կառավարում,
  4. Կոնֆլիկտների կառավարում:

Վերոնջյալ դասընթացների շարքի ամփոփումն ավարտվել է աշխատարանով, որի ընթացքում ուսանողներն իրենց ստացած գիտելիքները կիրառել են պրակտիկ առաջադրանքներ իրականացնելու համար:

2-րդ կիսամյակից սկսել է գործել գրքասերների ակումբը, որի շրջանակներում ուսանողները քննարկում և վերլուծում են տարբեր արտասահմանյան և հայ հեղինակների ստեղծագործություններ.

- Կերպարանափոխություն
- Մարդկային կատակերգություն
- Շան սիրտը
- Սալոմե
- Օտարը
- Սիզիփոսի առասպելը
- Ներսը եւ դուրսը

Ողջ տարվա ընթացքում գործել են ԵԼՀ ՈւՄ լեզուների խմբակները, որտեղ բարձր կուրսերի ուսանողները օտար լեզուներ (անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն) են դասավանդել համալսարանի ուսանողներին:

Նպատակ 5. Խթանել ուսանողական խորհրդի տեղական և միջազգային համագործակցության հաստատման և կայացման գործընթացը տարբեր ուսանողական և երիտասարդական կառույցների հետ:

- Մասնագիտական այց Smart Choice միջազգային լեզվի կենտրոն,

- Ձանդիպում Erasmus + և DAAD ծրագրի մասնակիցների, DAAD ծրագրի ներկայացուցչի հետ,
- Ձանդիպում Հայաստանում Իտալիայի դեսպանատան ներկայացուցչի հետ,
- Մասնագիտական այց Նաիրի գրատուն,
- Ոչամագործակցություն ESN –ի հայաստանյան գրասենյակի հետ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Դրական համարել ներկայացված հաշվետվությունը:

Գ. Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ 2023-2024 ուստարում թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվությանը՝ խոսքը փոխանցելով ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ղազարյանին:

**ԼՍԵՑԻՆ՝** Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ղազարյանի հաշվետվությունը կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ՝ Ռ. Ղազարյանը ներկայացրեց 2023-2024 ուստարում ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ծավալած ուսումնական և գիտական ակտիվ գործունեությունը:

Լույս են տեսել «Translation Studies: Theory and Practice» միջազգային գիտական պարբերականի 6-րդ հերթական և 2-րդ հատուկ համարները՝ համապատասխանաբար ղեկտեմբեր և մարտ ամիսներին: Ինչպես նաև պարբերականն ինդեքսավորվել է նաև «DOAJ», «ERIHPLUS», «EBSCO», «MIAR» և մի շարք այլ կարևոր միջազգային շտեմարաններում: 2024 թ.-ի ապրիլին այն ինդեքսավորվել է Համալսարանների և գիտահետազոտական համակարգերի գնահատման իտալական ազգային գործակալության կողմից (l'Agenzia Nazionale di Valutazione del Sistema Universitario e della Ricerca): Համապատասխան աշխատանքներ են տարվում պարբերականը «Web of Science» և «Scopus» միջազգային շտեմարաններում ինդեքսավորելու ուղղությամբ:

Ընդլայնվել է նաև գիտական պարբերականի խմբագրական խորհուրդը: Դրան են միացել թարգմանաբանության ոլորտում համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականներ ղոկտոր, պրոֆեսոր Գուադալուպե Սորիանո Բարաբինոն Իսպանիայի Գրանադա համալսարանից, որը նաև նշված համալսարանի միջազգայնացման հարցերով պրոռեկտորն է, ղոկտոր, պրոֆեսոր Լորետա Ուլվիդիենե Հուրերը Վիլնյուսի համալսարանից, Ռաջա Լահիանին Արաբական Միացյալ Էմիրությունների համալսարանից, Իլարիա Ռեմոնատոն Իտալիայի Պադովայի և Վերոնայի համալսարանից, Սիլվա Սվիկեն Լատվիայի Վետսպիլսի կիրառական գիտությունների համալսարանից և Թերեզ Էնգը Ստոկհոլմի համալսարանից:

2023թ. սեպտեմբերի 27-29-ը տեղի է ունեցել ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի և Վերոնայի համալսարանի օտար լեզուների և գրականության բաժնի կողմից «Eurasian Translation Congress» 2-ի շրջանակներում համատեղ կազմակերպված «Translation through Intermediary Language» խորագիրը կրող միջազգային գիտաժողովը (գիտաժողովի պաշտոնական կայքէջ՝ <http://ysu.am/etc/en/>):

ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոսական կազմը իրականացնում է ուսումնական և գիտական բեղուն գործունեություն՝ պատրաստելով ոչ միայն որակյալ թարգմանիչներ, այլ նաև հրատարակելով դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, գեղարվեստական թարգմանություններ, մենագրություններ և հոդվածների ժողովածուներ: Ամբիոնում իրականացվող գիտահետազոտական աշխատանքի շրջանակներում ղեկավարվում են ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսություններ:

2024թ. մարտին գործուղվել են Մադրիդի Կոմպլուտենսե համալսարան, որի շրջանակում հանդիպում է իրականացվել միջազգային վարչության՝ միջազգային պայմանագրերի և կրթաթոշակների բաժնի պետ Մարիա Խոսե Սերնային և քննարկվել ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի և

ՄԿՀ թարգմանաբանության բաժնի համագործակցությամբ «Վարչագործարարական թարգմանություն» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում համատեղ դիպլոմով մագիստրոսական կրթական ծրագիր ստեղծելու, որը ոչ միայն հնարավորություն կտա խթանել ուսանողների և դասախոսների շարժունությունը, այլ նաև կխորացնի երկու բաժինների և համալսարանների միջև համագործակցային կապերը:

Համատեղ դիպլոմով կրթական ծրագիր ստեղծելու շուրջ առարկայական քննարկումներ ծավալելու նպատակով հանդիպումներ են ունեցել ՄԿՀ բանասիրության ֆակուլտետի ուսումնական և որակի ապահովման գծով փոխդեկան պրոֆ. Արնո Գիմբերի, ինչպես նաև միջազգային հարաբերությունների գծով փոխդեկան պրոֆ. Ելենա Օրդունայի հետ:

Հանդիպումներ են իրականացվել նաև Թարգմանաբանության բաժնի ղեկավար պրոֆ. Անտոնիո Խեսուս Մարտինես Պլեգուեսուելոսի, նույն բաժնի պրոֆեսոր Դավիդ Գոնսալես-Իգլեսիասի, Ռոմանական, ֆրանսերեն, իտալերեն լեզուների և թարգմանաբանության բաժնի պրոֆեսորներ Խուլիա Սևիլիա Մունյոսի և Էլկե Կասեսի, ինչպես նաև Բանասիրության ֆակուլտետի նախկին ղեկան պրոֆ. Էուխենիո Լուխանի հետ, որոնք ներգրավված են ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի միջազգային գիտական պարբերականի խմբագրակազմում:

2024 թ. մարտին «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանում է եղել ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Իշխան Դադյանը, ով անցկացրել է բանավոր թարգմանության դասընթաց՝ 8 ժամ տևողությամբ: Դասավանդումից զատ իրականացվել են մի շարք հանդիպումներ Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի միջազգային վարչության, ինչպես նաև բանասիրության ֆակուլտետի վարչական և դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են երկու համալսարանների, մասնավորապես թարգմանական բաժինների միջև հարաբերությունների խորացման, հետազոտական աշխատանքների խթանման, ինչպես նաև համատեղ մագիստրոսական կրթական ծրագիր ստեղծելու հնարավորությունները:

Այժմ ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Իշխան Դադյանը եռամսյա ժամկետով գտնվում է Վերոնայի համալսարանում «Translation as a Tool for Promoting Inclusion and Accessibility in Teaching Languages and Literature» թեմայով հետազոտական աշխատանք իրականացնելու նպատակով:

Վերոնայի համալսարանի հետ արդեն իսկ ձեռք է բերվել համաձայնություն ամբիոնում գործող «Զբոսաշրջային թարգմանություն (անգլերեն-հայերեն)» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում համատեղ մագիստրոսական կրթական ծրագիր ստեղծելու վերաբերյալ:

Նշենք, որ այդ նպատակով 2023թ-ի նոյեմբերին ԵՊՀ էր այցելել ՎՀ-ի դոցենտ, «Էրազմուս+» ծրագրի համակարգող Դանիելե Արտոնին: Այցի շրջանակում վերջինս հանդես է եկել թարգմանության արդի խնդիրների վերաբերյալ դասախոսություններով, ինչպես նաև հանդիպումներ է ունեցել ԵՊՀ ղեկավարության հետ, որոնք տվել են իրենց հավանությունը համատեղ մագիստրոսական կրթական ծրագիր ստեղծելու գաղափարին, և պատրաստակամություն հայտնել աջակցելու գործընթացին: Այդ նպատակով «Զբոսաշրջային թարգմանություն (անգլերեն-հայերեն)» մագիստրոսական կրթական ծրագրում արդեն իսկ կատարվել են առարկայական մի շարք փոփոխություններ:

Առարկայական փոփոխություններ են իրականացվել նաև բակալավրի կրթական ծրագրում: Ներմուծվել է «Եռալեզու թարգմանություն» առարկան, ինչի արդյունքում օտար լեզուները կուսուցանվեն թարգմանական մակարդակում հետևյալ եռյակներով՝ հայերեն-անգլերեն-իսպաներեն, հայերեն-անգլերեն-ֆրանսերեն, հայերեն-անգլերեն-գերմաներեն և հայերեն-անգլերեն-իտալերեն:

2023 թ-ի նոյեմբերին «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ԵՊՀ էր այցելել նաև Վերոնայի համալսարանի օտար լեզուների և գրականության բաժնի դասախոս Զիորջիա Պոմարոլլին, որն անցկացրեց տեսալսողական թարգմանությանը նվիրված դասընթաց՝ 8 ժամ տևողությամբ:

2024 թ. մայիսին «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Վերոնայի համալսարանում է գտնվել ամբիոնի Բ.գ.թ., դոցենտ Աննա Խաչատրյանը, որն անցկացրել է թարգմանության տեսական և գործնական խնդիրներին նվիրված դասընթաց՝ 8 ժամ տևողությամբ:

ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի և ՀՀ Արդարադատության նախարարության միջև կնքված փոխըմունման հուշագրի շրջանակում 2023 թ. նոյեմբերին հերթական անգամ անցկացվել է նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգում 8 լեզվով:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի կողմից ստացել ենք առաջարկ համատեղ կազմակերպելու միջազգային գիտաժողով: Որոշվել է 2024 թ.-ի նոյեմբերին անցկացնել միջազգային գիտաժողով «Audiovisual Narratives, Drama and Translation» («Տեսալսողական պատմամներ, դրամա և թարգմանություն») խորագրով: Գիտաժողովի համակազմակերպիչն է նաև Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանը, որը կազմակերպչական հարցերին օժանդակելուց զատ, կներկայանա նաև գլխավոր բանախոսի կարգավիճակով՝ ի դեմս Իսպանական թատրոնի դոկտոր, պրոֆեսոր Դիեգո Սանտո Սանչեսի: Գիտաժողովի մյուս գլխավոր բանախոսներն են Հոլիվուդի զարգացման գծով գործադիր տնօրեն, սցենարիստ, հեղինակ, պրոֆեսոր Քրիստոֆեր Ֆոգլերը ԱՄՆ-ից և գիտությունների դոկտոր, տեսալսողական թարգմանության պրոֆեսոր Լորտեա Հուրերը Վիլնյուսի համալսարանից:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Դրական համարել հաշվետվությունը:

Այնուհետև, խոսքը փոխանցվեց ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.գ.թ., դոցենտ Գ. Սարգսյանին՝ ներկայացնելու ամբիոնի կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը:

**ԼՄԵՑԻՆ՝** ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.գ.թ., դոցենտ Գ. Սարգսյանի՝ ամբիոնի կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.գ.թ., դոցենտ Գ. Սարգսյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարում ֆրանսիական բանասիրության ամբիոնը շարունակել է իր գործունեությունը՝ կազմակերպելով բազմաթիվ միջոցառումներ, կարևորելով միջոցառումների և՛ գիտական բնույթը, և՛ գեղարվեստական մասը: Կարևորելով դասախոսների մասնագիտական կատարելագործումը՝ ամբիոնի դասախոսները վերապատրաստվել են Ֆրանսիայի Մոնպելյե Պոլ Վալերի 3 համալսարանից Երևանի պետական համալսարան գործուղված դասախոսների կողմից: Ֆրանսիացի դասախոսները դասախոսություններ են կարդում նաև ուսանողների համար: Էրազմուս+ ծրագրի շրջանակում Ֆրանսիայի Պոլ Վալերի Մոնպելյե 3 համալսարանի դասախոս պարոն Ֆիլիպ Վելնիցը մայիսի 4-ից 11-ը դասախոսությունների շարքով է հանդես եկել ֆրանսիական բանասիրության ամբիոնի ուսանողների համար: Ֆրանսիական բանասիրության ամբիոնը պարբերաբար հյուրընկալում է Ֆրանսիայի գործընկեր համալսարանների դասախոսներին: 2024 թվականի սեպտեմբերին նախատեսվում է ֆրանսիացի դասախոս Լամբեր Բարտելեմիի այցը ԵՊՀ, որի ընթացքում վերջինս դասախոսություններ կկարդա «Անզլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն» ծրագրի ուսանողների և դասախոսների համար: Էրազմուս+ ծրագրի շրջանակում ամբիոնի դասախոսներն իրենց հերթին մեկնում են Ֆրանսիայի գործընկեր համալսարաններ՝ Պոլ Վալերի Մոնպելյե 3, Էքս-Մարսել համալսարան, Լիլի համալսարան և դասախոսություններ կարդում: Այս ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի երկու դասախոս՝ Խաչատրյան Կարոլինան և Բաղդասարյան Լիաննան գործուղվել են Ֆրանսիայի Պոլ Վալերի Մոնպելյե 3 համալսարան և դասախոսություններով հանդես եկել: Ամբիոնի դասախոսներն ակտիվ կերպով մասնակցում են նաև մասնագիտական վերապատրաստումների, ոչ միայն առցանց տարբերակով, այլև առդեմ: Ամբիոնի դասախոսներ Լիաննա Բաղդասարյանը և Կարոլինա Խաչատրյանը 2023թ. մասնակցել են Նիցցա քաղաքի (Ֆրանսիա)

«Ֆրանկոֆոնիա» վերապատրաստման կենտրոնի կազմակերպած «Ֆրանսերենը որպես օտար լեզու» խորագրով դասախոսների վերապատրաստման երկշաբաթյա ծրագրին:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության հետ համատեղ ամբիոնն ունի ֆինանսավորվող ծրագիր. ամեն տարի ամբիոնը 1 տարով հյուրընկալում է ֆրանսիացի դասախոս, որը դասավանդում է «Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի ծրագրի բոլոր կուրսերի ուսանողներին, ինչպես նաև մագիստրանտներին:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնը համագործակցություն է եվրոպական բուհերի հետ՝ Պոլ Վալերի Մոնպելյե 3, Էքս-Մարսել համալսարան, Լիլի համալսարան, Բեզանսոնի համալսարան, Նիցցայի համալսարան: Ամբիոնը նախատեսում է նոր համագործակցություն Բելգիայի Մոնսի համալսարանի հետ, որը միտված է *Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն* կրթական ծրագրի թարգմանչական բլոկի զարգացմանը: Նիցցայի համալսարանի հետ Ֆրանսիական բանասիրության ամբիոնն ունի համագործակցության հուշագրեր, որոնք նախատեսված են ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար: Ֆրանսիական բանասիրության ամբիոնը կարևորում է արտասահմանյան բուհերի հետ համագործակցությունները, քանի որ ծրագիրը միջազգայնացման միտում ունի, որն էլ Երևանի պետական համալսարանի ռազմավարությունն է:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնը կարևորում է իր գործունեության գիտական մասը, և ամեն տարի ֆրանսիական բանասիրության ամբիոնը մասնակցում է *Ֆրանկոֆոն գրականության օրեր* ամենամյա կոնֆերանսների շարքին: Կոնֆերանսները տեղի են ունենում հոկտեմբեր ամսին: Այս ուսումնական տարի ֆրանսիական գրականության օրերի շրջանակում ֆրանսիական բանասիրության ամբիոնը հյուրընկալել էր Ամիանսի և Սորբոնի համալսարանների (Ֆրանսիա) դասախոսներ Լորան Բովին և Ժանիվ Գերենին: Ֆրանսիական գրականության օրերի շրջանակում կազմակերպված կոնֆերանսները նվիրված էին 20-րդ դարի մոդեռնիզմի վառ ներկայացուցիչ, ֆրանսիացի մեծանուն էքզիստենցիալիստ գրող Ալբեր Կամյուին: 2024 թ. սեպտեմբեր ամսին նախատեսվում է մեկ այլ հանդիպում՝ նվիրված աբսուրդի թատրոնի թերևս ամենակարկառուն ներկայացուցչին՝ Էժեն Իոնեսկոյին: 2024թ. հոկտեմբեր ամսին ֆրանսիական բանասիրության ամբիոնը նախատեսում է «ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԽՍՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԱԽՆՅԱՑ ԵՐԿԻՐ: Գինին որպես միջմշակութային հաղորդակցության բաղադրիչ՝ տարբեր գիտակարգերի հատույթում» խորագրով միջազգային գիտաժողով, որին մասնակցելու հայտ են ներկայացրել ավելին քան 30 արտասահմանցի գործընկեր: Ամբիոնի դասախոսները ֆրանսիական բանասիրության ամբիոնի նախաձեռնությամբ կատարում են բազմաթիվ թարգմանություններ, ունեն տպագրված հոդվածներ /Թամրազյան Շուշանիկ, Սարգսյան Գայանե, Բլբուլյան Թագուհի, Մարության Աննա /:

Ամբիոնը նաև մասնակցում է մշակութային մի շարք միջոցառումների: Սերժ Ավետիքյանի Մովերների թատրոնի հետ համագործակցության շրջանակներում ամբիոնի ուսանողները ներկայացումով հանդես եկան Գյումրու Մտորումների թատրոնում: Մտորումների թատրոնի դերասանները ներկայացրին կանադացի ժամանակակից գրող Մարտին Բելմարի «Տարօրինակ և խորհրդավոր» վեպը, որը հայերեն է թարգմանել ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Գայանե Սարգսյանը, իսկ ուսանողները ներկայացրին նույն հեղինակի «Սպանել մոծակին» վեպը՝ ֆրանսերենով: Ներկայացումներին ներկա էին Սերժ Ավետիքյանը և հեղինակը: Ներկայացումները մեծ հաջողության արժանացան՝ մեծ արձագանք ունենալով թե մամուլում, թե հեռուստատեսությամբ:

Մայիսի 2-ին Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կայացավ ֆրանսիական ռոմանտիզմի ամենաինքնատիպ հեղինակներից մեկի՝ Գյոթեի «Ֆաուստի» լեգենդար թարգմանչի՝ Ժերար դը Ներվալի «Կրակի դուստրերը» գրքի հայերեն թարգմանության (Նաիրի հրատարակչություն, թարգմ. Շուշանիկ Թամրազյանի) շնորհանդեսը: Բնագրային թարգմանության, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակը ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ., բանաստեղծ, գրականագետ Շուշանիկ Թամրազյանն է:

ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության, «Ֆիլմադարան» ՀԿ-ի և Ազգային գրադարանի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել էր Ֆրանկ Կասենտիի «Կարմիր պաստառը» ֆիլմի

ցուցադրությունը՝ նվիրված Միսաք և Մելինե Մանուշյանների աճյունների վերահուղարկավորմանը Փարիզի Պանթեոնում: Ֆրանսիական բանասիրության ամբիոնում լավագույն ավանդույթները շարունակվում են: Դրա վառ ապացույցն է նաև այն, որ «Կարմիր պաստառը» ֆիլմի թարգմանությունը վստահված էր ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս Աննա Մարտիայանին: Նա ոչ միայն այս ֆիլմն է թարգմանել, այլև բազմաթիվ վեպեր, ստեղծագործություններ, ընդ որում՝ ոչ միայն ֆրանսերենից, այլև պորտուգալերենից:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ջանքերով «Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն» ծրագրի ուսանողները անդամագրվել են Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության ուսանողական ցանցին: Յուրաքանչյուր շաբաթ ուսանողները առցանց հանդիպումներ և քննարկումներ են ունենում ֆրանկոֆոն համալսարանների ուսանողների հետ: Այդ ծրագրի շրջանակում ամբիոնը դրամաշնորհ է շահել և իրականացրել է մեկօրյա այց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, որտեղ աշխատարաններ է կազմակերպել մասնաճյուղի ուսանողների համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Դրական համարել ներկայացված հաշվետվությունը:

Անդրադարձ կատարվեց օրակարգի երրորդ հարցին՝ դասախոսների և ասիստենտների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթի անցկացմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆՆ**

- Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ Նաիրա Հարությունի Մարտիրոսյանին ասիստենտի պաշտոնին ներկայացնելու համար: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 1,
- Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ Մարիամ Գարեգինի Խաժակյանին ասիստենտի պաշտոնին ներկայացնելու համար: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 1,
- Երաշխավորել անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի դասախոս Լուսինե Գեղամի Բոստանջյանի թեկնածությունը դասախոսի պաշտոնում ընտրվելու համար: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 23, դեմ՝ 0, անվավեր՝ 2,
- Երաշխավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոս Լուսինե Համբարձումյանին մասնակցելու դասախոսի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 25, դեմ՝ 0, անվավեր՝ 0,
- Երաշխավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ Լուսինե Մադոյանին՝ մասնակցելու ասիստենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 1:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և  
գիտխորհրդի նախագահ,  
բ.գ.թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Գ. Դավայան

22.05.2024թ.